

ՀԱՅՏՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Դիլիջան համայնքի հողամասերը աճուրդային կարգով օտարող հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն համարվող ներքոհիշյալ հողամասերի աճուրդ - վաճառք

LNS-ի անվանումը	Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/	Ծածկագիրը	Մակերեսը քմ	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի օգտագործման նպատակը	Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների/ առկայությունը	Ճանապարհների, առկայության մասին տվյալներ	Ջրատարի, կոյուղու, էլեկտրահաղորդման գծերի, գազատարի առկայության մասին տվյալներ	Երջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումները	Մեկնարկային գինը /դրամ/
Lստ 32/ՔՀ-23/	ք.Դիլիջան, Կամոյի 30/2	11-003-0329-0031	100,0	Բնակավայրերի հող	ավտոտնակի կառուցման	չկան	առկա է	առկա են մինչև 50մ հեռավորության վրա	ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի	700 000
Lստ 33/ՔՀ-23/	ք.Դիլիջան, Սյաթ-Նովայի 23/4	11-003-0050-0060	277,0	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	չկան	առկա է	առկա են մինչև 50մ հեռավորության վրա	ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի	1 939 000
Lստ 34/ՔՀ-23/	ք.Դիլիջան, Արցախի 1/11	11-003-0083-0003	371,4	Բնակավայրերի հող	բնակելի կառուցապատման	չկան	գրունտային ճանապարհ	առկա են մինչև 200մ հեռավորության վրա	ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի	2 599 800
Lստ 35/ՔՀ-23/	ք.Դիլիջան, Մյասնիկյան 11/1	11-003-0313-0023	468,5	Բնակավայրերի հող	բնակելի տան կառուցման	չկան	գրունտային ճանապարհ	առկա են մինչև 100մ հեռավորության վրա	ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի	3 279 500
Lստ 36/ՔՀ-23/	ք.Դիլիջան, Օրջոնիկիձեի 4-րդ նրբ. 80/10	11-003-0276-0034	652,8	Բնակավայրերի հող	բնակելի տան կառուցման	չկան	գրունտային ճանապարհ	առկա են մինչև 200մ հեռավորության վրա	ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի	4 569 600
Lստ 37/ՔՀ-23/	գ.Հաղարծին, 13-րդ փողոց 2-րդ փկղ. 1/1	11-042-0006-0089	179,0	Բնակավայրերի հող	բնակելի տան կառուցման	չկան	առկա է	առկա են մինչև 50մ հեռավորության վրա	ըստ ճարտարապետահատակագծային առաջադրանքի	519 100

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, հողամասի ելակետային տվյալներին և հատակագծին կարող են ծանոթանալ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնում՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, համայնքապետարանի շենք 2-րդ հարկ:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն ԶՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է Դիլիջանի համայնքապետարան ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ և Դիլիջանի համայնքապետարանի 900405051401 հաշվարկային հաշվին աճուրդի մասնակցության վճարի՝ 35000դրամի մուծման անդորրագիր: Աճուրդի մասնակիցներն աճուրդի անցկացման օրը մուծում են նախավճար տվյալ հողամասի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով: Եթե մասնակիցն աճուրդի արդյունքներով չի հաղթել, նախավճարն անմիջապես վերադարձվում է նրան: Եթե մասնակիցը հաղթել է, ապա նախավճարի գումարը ներառվում է վաճառքի գնի մեջ: Աճուրդի դրված հողամասի նվազագույն քայլի չափը հաշվարկվում է մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Աճուրդում հաղթող է ճանաչվում ամենաբարձր գին առաջարկած մասնակիցը:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Դիլիջանի համայնքի հողամասերը աճուրդային կարգով օտարող հանձնաժողովին՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան 55, Դիլիջանի համայնքապետարանի շենք, 2-րդ հարկ:

Աճուրդը կայանալու է 2023թ. հուլիսի 10-ին ժամը 11.00-ին, Դիլիջանի համայնքապետարանի 2-րդ հարկի նիստերի դահլիճում, հասցեն՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55:

Հայտերի ընդունման վերջնաժամկետը 2023թ. հուլիսի 03-ը, ժամը 18.00: